ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Սույն լիցենզային պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) կնքվել է 2013թ. հունվարի 14-ին (այսուհետ՝ Կնքման ամսաթիվ) Սուրեն Արմենի Ալոյանի (անձնագիր՝ AN0284697, տրված 2012-12-04, 004-ի կողմից, հասցե՝ Կոմիտասի պ., շ. 1/11, 0033 Երևան, ՀՀ) (այսուհետ՝ Իրավատեր), մի կողմից, և «Նոր սերնդի դպրոց» հասարակական կազմակերպության (հասցե՝ 0051, ՀՀ, ք Երևան, Կոմիտասի պողոտա /շ. 49/2 / 503ս .) (այսուհետ՝ Օգտագործող)՝ ի դեմս Արթուր Վլադիմիրի Բաբայանի, որը գործում է հասարակական կազմակերպության նախագահի կողմից 14.01.2013 թվականին տրված լիազորագրի հիման վրա, մյուս կողմից, այսուհետ միասին նաև՝ Կողմեր:

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ, ՈՐ

Ա. Իրավատերը հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում նկարագրված համակարգչային ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) նկատմամբ հեղինակային գույքային և ոչ գույքային բացառիկ իրավունքների օրինական և միակ տիրապետողը,

Բ. Օգտագործողը հայտնում է իր ցանկությունը ձեռք բերելու, իսկ Իրավատերը համաձայն է տրամադրել Օգտագործողին Ծրագրի նկատմամբ որոշակի գույքային իրավունքներ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով,

ԿՈՂՄԵՐԸ ԵԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՄԱՍԻՆ՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1. Իրավատերը սույն Պայմանագրով Օգտագործողին փոխանցում է, իսկ Օգտագործողն ընդունում է Ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս իր հայեցողությամբ օգտագործելու ոչ բացառիկ, ոչ փոխանցելի իրավունք՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

1.2. Իրավատերն Օգտագործողին տրամադրում է բոլոր տեխնիկական փաստաթղթերը, ուղեցույցները, ձեռնարկները, որոնք անհրաժեշտ են Օգտագործողին Ծրագրի հնարավորությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու և Ծրագիրը՝ ըստ նպատակի սույն Պայմանագրով (ներառյալ հավելվածները) սահմանված կարգով օգտագործելու համար:

1.3. Ծրագրի հետ մեկտեղ Իրավատերը թույլ է տալիս Օգտագործողին օգտագործել dasaran.am դոմենը՝ հաշվի առնելով սույն Պայմանագրով սահմանված օգտագործման սահմանափակումները:

2. ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1. Օգտագործողը ընդունում և ճանաչում է Ծրագրի նկատմամբ Իրավատիրոջ հեղինակային

գույքային և ոչ գույքային բացառիկ իրավունքները: Սույն Պայմանագրի որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել, որպես Ծրագրի նկատմամբ որևէ իրավունքների փոխանցում Օգտագործողին կամ որևէ երրորդ անձանց, բացառությամբ այն իրավունքների փոխանցման, որոնց վերաբերյալ հատուկ նշված է սույն Պայմանագրում:

2.2. Օգտագործողը կարող է օգտագործել Ծրագիրը բացառապես իր կանոնադրական նպատակներին հասնելու նպատակով:

2.3. Օգտագործողն առանց Իրավատիրոջ գրավոր համաձայնության իրավունք չունի փոխանցել սույն Պայմանագրով իրեն տրամադրված իրավունքները որևէ երրորդ անձի:

2.4. Օգտագործողն իրավունք ունի առանց Իրավատիրոջ համաձայնության մշակել, հարմարեցնել, զարգացնել կամ որևէ այլ կերպ փոփոխություն կատարել Ծրագրում կամ դրա որևէ մասում, միացնել կամ համատեղել որևէ այլ ծրագրի հետ, պատրաստել Ծրագրի կրկնօրինակ կամ վերարտադրել այն՝ պայմանով, որ այդպիսի փոփոխության կամ վերարտադրության նկատմամբ բոլոր բացառիկ գույքային իրավունքները կպատկանեն Իրավատիրոջը, իսկ Օգտագործողը կստանա դրանց օգտագործման իրավունք սույն Պայմանագրով սահմանված օգտագործման պայմաններին համապատասխան:

2.5. Օգտագործողն իրավունք ունի առանց Իրավատիրոջ համաձայնության երրորդ անձանց հետ հարաբերություններում ներկայանալ որպես Ծրագրի լիիրավ օգտագործող, պայմանագրեր կնքել երրորդ անձանց հետ, վերջիններիս ծառայություններ մատուցել, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի և կատարել այլ գործողություններ իր կանոնադրական նպատակների շրջանակներում:

2.6. Հաշվի առնելով, որ Օգտագործողը Ծրագրի օգտագործմամբ շահույթ չի հետապնդում՝ Իրավատերը Ծրագիրն Օգտագործողին է տրամադրում անհատույց: Օգտագործողի կողմից Ծրագրի օգտագործման արդյունքում շահույթ ստանալու դեպքում Իրավատերն իրեն իրավունք է վերապահում պահանջել Օգտագործողից փոխանցել իրեն Ծրագրի օգտագործումից ստացված ամբողջ շահույթը:

3. ԺԱՄԿԵՏ

3.1. Ծրագրի օգտագործման իրավունքը համարվում է Իրավատիրոջ կողմից Օգտագործողին տրամադրված սույն Պայմանագրի կնքման պահից:

3.2. Սույն Պայմանագրով Ծրագրի օգտագործման իրավունքը տրամադրվում է 10 /տասը/ տարի ժամկետով:

3.3. Իրավատերը կարող է միակողմանի կարգով դադարեցնել սույն Պայմանագիրը Օգտագործողի կողմից սույն Պայմանագրի որևէ պայմանների խախտման դեպքում, եթե Օգտագործողը չի վերացրել խախտումը Իրավատիրոջ կողմից այդ խախտման վերաբերյալ գրավոր ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում:

3.4. Իրավատերն իրավունք ունի միակողմանի կարգով առանց որևէ պատճառի դադարեցնել սույն Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 1 (մեկ) ամիս առաջ ծանուցելով Օգտագործողին:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում սույն Պայմանագրով սահմանված իր պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակի չկատարման, ինչպես նաև ոչ պատշաճ կատարման հետևանքով մյուս կողմից պատճառված վնասի համար:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

5.1. Սույն Պայմանագրի Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվությունից, եթե դա անհաղթահարելի ուժի հանգամանքների, այսինքն՝ հրդեհների, ջրհեղեղների, երկրաշարժերի, ապստամբությունների, պատերազմների, ռազմական գործողությունների հետևանք է հանդիսացել, եթե այդ հանգամանքները կրել են անկանխատեսելի բնույթ, ի հայտ են եկել սույն Պայմանագրի կնքման օրվանից հետո և անմիջականորեն ազդել են դրա կատարմանը:

5.2. Անհաղթահարելի ուժի հանգամանքների ի հայտ գալու դեպքում Կողմերի պարտավորությունների կատարման ժամկետները հետաձգվում են այդ հանգամանքների և դրանց հետևանքների գործողության ժամանակին համաչափորեն:

5.3. Եթե անհաղթահարելի ուժի գործողությունը շարունակվում է ավելի քան վեց ամիս, Կողմերն իրավունք ունեն լուծել սույն Պայմանագրով պարտավորությունների հետագա կատարման հնարավորության կամ դրա լուծման հարցը, ինչի մասին Կողմերը կազմում են առանձին լրացուցիչ համաձայնագիր:

6. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

6.1. Կողմերը պարտավորվում են պահպանել սույն Պայմանագրի վերաբերյալ ցանկացած բնույթի տեղեկատվության, ինչպես նաև սույն Պայմանագրի կատարման հետ կապված Կողմերի կողմից միմյանց փոխանցված տեղեկատվության և նյութերի (այսուհետ՝ Գաղտնի տեղեկատվություն) գաղտնիությունը՝ ներառյալ (առանց սահմանափակման) այն տեղեկատվությունը և նյութերը, որոնք փոխանցվել են մինչև Կնքման ամսաթիվը: Կողմերը պարտավորվում են զերծ մնալ Գաղտնի տեղեկատվությանն առնչվող հետևյալ գործողություններից (ա) առանց մյուս կողմի նախնական գրավոր համաձայնության Գաղտնի տեղեկատվությունը երրորդ անձանց բացահայտելուց, (բ) դրանք սեփական կամ սույն Պայմանագրով չնախատեսված այլ նպատակների համար օգտագործելուց, կամ (գ) պատշաճ ուշադրություն չցուցաբերելու կամ անփութության հետևանքով Գաղտնի տեղեկատվություն բացահայտելուց:

6.2. Օգտագործողը պարտավոր է Իրավատիրոջը անհապաղ տեղեկացնել Գաղտնի տեղեկատվության ցանկացած ապօրինի տարածման կամ օգտագործման վերաբերյալ, որն առաջացել է Օգտագործողի կամ Օգտագործողի աշխատակիցների թույլ տրված խախտման հետևանքով, ինչպես նաև համագործակցել Իրավատիրոջ հետ Գաղտնի տեղեկատվության հետագա օգտագործումը և տարածումը կանխելու և Գաղտնի տեղեկատվությունը Իրավատիրոջ տիրապետման ներքո վերադարձնելու ուղղությամբ:

6.3. Օգտագործողը ընդունում է, որ Ծրագիրը պարունակում է Իրավատիրոջ համար մեծ արժեք ներկայացնող գույքային իրավունքներ և առևտրային գաղտնիք: Օգտագործողը

պարտավորվում է առանց Իրավատիրոջ գրավոր համաձայնության չտրամադրել կամ որևէ կերպ հասանելի չդարձնել Ծրագիրը կամ դրա որևէ մասը որևէ անձի, որը չի հանդիսանում Օգտագործողի աշխատակից: Օգտագործողը նաև պարտավորվում է ձեռնարկել Ծրագրի անվտանգության ապահովման պահմանման համար ողջամտորեն անհրաժեշտ բոլոր միջոցները:

7. ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

7.1. Սույն Պայմանագիրը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7.2. Սույն Պայմանագրով տարաձայնությունները և վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Դրանց արդյունքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն Պայմանագիրը և դրա Հավելվածները ներառում են սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ Կողմերի միջև բոլոր համաձայնությունները և որևէ նախնական գրավոր կամ բանավոր համաձայնություն կամ գրագրություն չի կարող փոփոխել սույն Պայմանագրի դրույթները: Բոլոր փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում, եթե դրանք սույն Պայմանագրի կողմերի միջև ձևակերպվում են գրավոր:

8.2. Սույն Պայմանագիրը կարող է կնքվել հավասար իրավաբանական ուժ ունեցող ցանկացած քանակությամբ օրինակներից, որոնցից յուրաքանչյուրը համարվում է բնօրինակ, սակայն բոլորը միասին հանդիսանում են միևնույն փաստաթուղթ:

ԻՐԱՎԱՏԵՐ	ՕԳՏԱԳՈՐԾՈՂ
Սուրեն Արմենի Ալոյան	«Նոր սերնդի դպրոց» ՀԿ
	Լիազորված անձ՝ Արթուր Վլադիմիրի Բաբայան